ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Փետրվարի 1-ին, ուրբաթ.—Այսօր, ժամը 12-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին այցելեցին հայերից և արաբներից բաղկացած Բեյրութի հանձնախումբը, որն իր հետ բերեց ոսկեձույլ մի գավաթ՝ ափյուռքի հայության նվերը Երևանի «Արարատ» ֆուտբոլային թիմին՝ նրա փայլուն հաղթանակների առիթով:

Հանձնախմբի կազմում էին Լիբանանի Սին Էլ Ֆիլի քաղաքապետ Հաբիբ Հաքիմը, «Արարատ» օրաթերթի խմբագրապետ Ժիրայր Նաիրին, լիբանանահայ հասարակական գործիչ Վահրիճ Ջերեջյանը, Հայ մարմնամարզական միության վարչության անդամ Սարգիս Շիրտմյանը, Լիբանանի «Արարատ» մարզական միության նախագահ Պերճ Տեր-Պողոսյանը և այլ անձինք Բեյրութի հայ մարզական կազմակերպություններից՝ գլխավորությամբ Սարգիս Սարգսյանի:

Հարգարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը: Հայոց Հայրապետի և հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ ջերմ մթնոլորտում:

*
* *

Փետրվարի 3-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Աղան վրդ. Բալիոզյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Լուր, որդեակ, խրատու հօր քոյ, եւ մի մերժեր զօրէնքս մօր քոյ» (Առակ. Ա 8) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը ս. Հռիփսիմե տաճարում Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը քահանա ձեռնադրեց լիբանանահայ Մանուկ սրկ. Թնգրյանին, որը վեց ամիս հոգևոր ճեմարանում հետևեց քահանայական դասընթացներին: Նորընծան վերանվանվել է տ. Նարեկ քահանա:

Տեր հայրն իր քառասունքը Մայր Աթոռում անցկացնելուց հետո, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հովվելու է Բոմբեյի հայ հավատացյալների հոտը:

*
* *

Փետրվարի 5-ին, երեքշաբթի.—Այսօր Մայր Աթոռ այցելեցին հյուրաբար Հայաստանում գտնվող Լեռնային Լիբանանի նահանգապետ Համիս Խուրին, Լիբանանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ջորջ Լուիս Հաքիմը և Լիբանանահայ մարզական կազմակերպությունների նախագահ Սարգիս Սարգսյանը:

Պատվարժան հյուրերին բարեհաճեց ընդունել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

Հայոց Հայրապետի և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ հետաքրքիր զրույց՝ բարեկամական մթնոլորտում:

*
* *

Փետրվարի 8-ին, ուրբաթ.—Այսօր, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Լոնդոնից ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանեց Մայր Աթոռի միաբան Վրեժ սրկ. Ներսիսյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանաների տոնի առթիվ կազմակերպված հանդիսություններին:

Վրեժ սարկավագն ավարտել է Լոնդոնի Քինգս կոլեջի աստվածաբանական ֆակուլտետը և այժմ աշխատում է իր դոկտորական ավարտաճառի վրա, որի թեման է՝ «Պավղիկյան-թոնդրակյան շարժումը Հայաստանում»:

*
* *

Փետրվարի 9-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվեց Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որտեղ օրակարգում քննարկվեց նաև «Էջմիածին» ամսագրի հրատարակության 30-ամյա հոբելյանը նշելու հարցը: Այս առթիվ կազմվեց հոբելյանական հանձնաժողով, որի վրա պարտականություն դրվեց հոբելյանի առթիվ հանդիսությունների կազմակերպումն ու անցկացումը:

*
* *

Փետրվարի 10-ին, կիրակի.—Դ կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում ս. Սարգիս զորավարի կյանքի և նահատակության մասին:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 11-ին, երկուշաբթի.—Այսօր հոգևոր ճեմարանի ուսանողությունը, ճեմարանի տեսուչ տ. Արիս ծ. վրդ. Շիրվանյանի գլխավորությամբ և դասախոսական կազմի մասնակցությամբ, երկօրյա ձմեռային պըտույտի է գնում Ծաղկաձոր:

*
* *

Նույն օրը, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Վիեննայից ս. Էջմիածին է ժամանում Մայր Աթոռի միաբան տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանաների տոնին կազմակերպված հանդիսություններին:

*
* *

Փետրվարի 13-ին, չորեքշաբթի.—Նախատոնակ Տեառնընդառաջի.

Այսօր, երեկոյան, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետը, շրջապատված Մայր Աթոռի միաբանությամբ, նախագահում է Տյառնընդառաջի նախատոնակի հանդիսությանը:

Ժամը 19-ին Վեհարանի այգում բարձրացել էր Տյառնընդառաջի ավանդական խարույկը: Վեհափառ Հայրապետը որոշյալ ժամին, շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով և հոգևոր ճեմարանի դասախոսներով ու ուսանողներով, մոտենում է խարույկին և բոցավառում այն՝ ներկաների խանդավառ ծափերի ներքո:

Ուսանողները երգում և ուրախանում են ավանդական խարույկի շուրջը մինչև ժամը 22-ը:

*
* *

Նույն օրը, ժամը 21-ին, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ և նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որի ընթացքում խոսք են առնում՝ այդ օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բասրայի հայոց հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը, տ. Գարեգին աբդ. Ներսիսյանը և Վրեժ սրկ. Ներսիսյանը՝ ներկայացնելով իրենց պաշտոնավարած համայնքների եկեղեցական-ազգային կյանքը:

*
* *

Փետրվարի 14-ին, հինգշաբթի.—Տեառնընդառաջ. Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 17-ին, կիրակի.—Ե կիրակի զկնի Ծննդեան.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բասրայի հայոց հոգևոր հովիվ տ. Սեպուհ վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Եթէ ոք ծարաւի իցէ, եկեսս-

ցէ առ իս և արբցէ» (Հովհ. Է 37) բնաբանով:

Ս. պատարագին ներկա է լինում Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 18-ին, երկուշաբթի.—Այսօր ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Սոֆիայի հայոց հոգևոր հովիվ տ. Մեսրոպ քհն. Բենլիյանը՝ մասնակցելու ս. Ղևոնդյանց քահանայից տոնին նվիրված հանդիսություններին:

*
* *

Փետրվարի 22-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որին, Ն. Ս. Օծության հրավերով, որպես անդամ, մասնակցում է նաև ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը:

Նիստից առաջ Վեհափառ Հայրապետը ջերմորեն և սիրով ողջունում է Գերագույն հոգևոր խորհրդի նոր անդամ նկարիչ Գրիգոր Խանջյանի ներկայությունը և մաղթում նրան հաջողություն՝ Մայր Աթոռում իր նոր ծառայության ասպարեզում:

Նկարիչ Գրիգոր Խանջյանը նախապես երկար տարիներ մասնակցել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնախմբի աշխատանքներին, իսկ 1968 թվականից նա անդամ է նույն հանձնախմբի:

Այս ձևով համալրվում է Գերագույն հոգևոր խորհրդի աշխարհական անդամների կազմը՝ նախկին անդամ ճարտարապետ Միքայել Մազմանյանի մահից հետո:

Ժողովում խոսք առնելով նկարիչ Գրիգոր Խանջյանն իր սրտագին երախտագիտությունն է հայտնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին՝ այս բարձր պատվի և անդամակցության համար Գերագույն հոգևոր խորհրդին, և խոստանում Մայր Աթոռում իր հետագա աշխատանքներով արդարացնել հայրապետական բարձր վստահությունը:

Գերագույն հոգևոր խորհրդի մյուս անդամները ջերմորեն շնորհավորում են նկարիչ Գրիգոր Խանջյանին որպես Գերագույն հոգևոր խորհրդի անդամ:

*
* *

Փետրվարի 24-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան.

Այսօր Մայր տաճարում, փակ խորանի առաջ, ս. պատարագ է մատուցում տ. Գարեգին աբղ. Ներսիսյանը:

«Հայր մեր»-ից առաջ քարոզում է Վեհափառ Հայրապետը «Ոչ հացի միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանի Աստուծոյ» (Ղուկ. Դ 4) բնաբանով:

*
* *

Փետրվարի 26-ին, երեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Բուենոս-Այրեսից ուխտավորաբար ս. Էջմիածին ժամանեց Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը:

*
* *

Փետրվարի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Մայր տաճարում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ սկսվեց մեծ պահոց հատուկ «Կարգ Ապաշխարութեան և Արևագալի ժամերգութեան»:

Արևագալի ժամերգության ընթացքում Արևագալի երգերը կատարեցին հոգևոր ճեմարանի սաները:

Երեկոյան Մայր տաճարում պաշտվեց նաև «Խաղաղական»-ի ժամերգությունը:

*
* *

Նույն օրը, երեկոյան ժամը 20.30-ին, Վեհափառ Հայրապետի ներկայությամբ տեղի է ունենում միաբանական հերթական հանդիպում, որտեղ «Նախանձի պատճառները և հետևանքները» թեմայով զեկուցում է տ. Եզնիկ աբեղա Պետրոսյանը:

Բանախոսությունից հետո տեղի է ունենում մտքերի աշխույժ փոխանակություն:

Ապա Մայր Աթոռի միաբան Հովհաննես սրկ. Գրվրգյանը ներկայացնում է Հարավային Ամերիկայի մեր թեմերի եկեղեցական, ազգային, մշակութային կյանքը: